

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Պերք. ՅԵՍՏԻԿԵ ԹԵՐԹԻ Խ 4 «ԹՈՂՈՒԹԻՒՆ» ՎԵՐԿԱԳՐԻ տակ
ՆԱԽՐՎԱՅԻ ԵԿՂԻՄԿՈՎՈՒ ԱՆՏՈՆԵԲՆՔ գՐՈՒՄ Է ՀԵՏԵԿԵԱԼՔ. —

Յունվարի 19-ը, թողութեան այդ օրը թող իւր շողքը
տարածի և այն անձանց հոգիների վրայ՝ որոնք վերջին անգամ
արեկ երես տեսան յունվարի 9-ին և վշտամած փափագում էն
հաշտուել մեզ հետ։ Այդ խողովութեան օրերին մահուան ճա-
կատագրական հարուածը մեր միջից յափշտակում էր և այն-
պիսիներին, որոնք սրտանց հեռու էին ամեն տեսակ խողովու-
թիւնից։ Այդ չարաբաստիկ օրը մեր քաղաքի փողոցներում
սպանուածները մի ընդհանուր հանգստեան տեղ գտան. սա-
կայն նրանց ըոլորե գագաղները չեն կարող մեղադրական սա-
ւանով ծածկուել։ Գերեզմանական բլուրները ճիշտ է ճնշեցին
բազմաթիւ սրտեր, որոնք չը թոյլատրուած ճանապարհով էին
ձգտում հասնել իրենց նպատակին, բայց այդ բլուրների տակ
ճնշեցին նաև թէ զիւրաբորքոք՝ թուլամիտ մարդիկ և թէ մաք-
րութեամբ լիքը՝ ողեսորութեան փոթորկից յափշտակուածներ։
Սպանուածների մէջ ըոլորը պատասխանատու չեն։ Յանցաւոր-
ները քիչ են, իսկ զՓբաղզները բազմաթիւ։ Վերջիններին հո-
գիները մեղանից խլուեցին Աստուծոյ անհասանելի տնօրինու-
թեամբ, որպէս զի մենք՝ տեսնելով անմեղ արիւնը, խաղաղունք
մահուան հրեշտակի հրեղէն որի առաջ։ Մենք մեր զգացմունք-
ներով չենք խորշում նրանցից, այլ սիրով աղօթում ենք նրանց
համար։ Նրանք սպանուած են, բայց ոչ ամօթապարտ, որպէս
զի մենք չը դարձնենք մեր սիրտը նրանցից, այլ աղօթքով պա-
հենք նրանց յիշատակը և ողբանք նրանց խղճալի վիճակը։ Վեհժ-
խընդըրութեան Աստուծը կը կշռի նրանցից իւրաքանչիւրի յան-
ցանքը և կը հատուցանի մեր դատավճարից և կարծիքից անկախ։
թող անմեղների արեան մէջ լոււցուեն ու հալչեն մեղաւորների
թշուառութիւնները։ Մեռածների մեծամասնութեան անմեն-
զութիւնը գիտակցելով, անդորր ու խաղաղ և ոչ թէ վախվիսելով
և զգուշաւորութեամբ մերձենանք, ընկնենք նրանց ողբալի զե-
սեզմանների վրայ, մեր աղօթքը թող յարգաքի մեռնողների
շաւեղը և սփոփի կենդանի մնացողների վիշտն ու հառաչանքը։

— Սրբազանի խօսքը վերաբերում է յունվարի 9-ին սպան-
ուած բանուորներին, կանանց և երեխաներին, որոնց մէջ կային

միանգամայն անմեղ և անմասն անձիւք։ Տայ Առառւած, որ
խաղաղութեանը նորից հիմք գնի ժողովրդի մէջ և վերջ արուի
այսքան անմեղների կատրածներին։

ԲԱՐԵՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Перк. Вѣстникъ-псѣмъ կարդումъ Ենք.

Այժմս հասարակութեան մէջ շատ է խօսւում իշխանութեան բարեհայեցզոր թեան մասին. մինչդեռ վարչական այդ մեջ ոչ մի տեղ այն շափով չի գործազրուել և չի գործադրուում, որչափ հոգեոր իշխանութեան մէջ:

Մինչև հոդեոր կանոնի ստորիաների վերաբերեալ օրինաց ժողովածութիւնը 1841 թուին, տեղական թեմական իշխանութեան կամքը փոխարինում էր թեմում բարոր օրէնքների: Թէև վերջին վաթուունամեակին գրուած են հոդեորականու թեան վերաբերեալ բաղմաթիւ օրէնքներ, բայց և այնպէս ցայսօր առաջնակարգ տեղ է բռնում բարեհայեցողութիւնը: Վերեւում առաջ բերած ճշմարտութիւնն առաւել պատկերաւոր դարձնելու համար առաջ կը բերենք մի քանի օրինակներ:

Նախ՝ եպիսկոպոսը կարող է ըստ իւր բարեհայեցողութեան քահանայական ուղած աեղք տալ կիսադրագետ, ոչ մի տեղ չը սպազած մարդուն, թէկուզ այդ աեղք համար ինդքած լինին ծառայած աւագ քահանաներ և քահանաներ, որոնք ուսումն աւարտել են հոգեոր դպրոցներում կամ ճեմարաններում։ Երկրորդ՝ մըքան ծանր է «Ճառայութեան օգաի համար» մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրութիւնը (սովորաբար լաւ տեղից տեղից վատն են փոխադրում) քահանաների, ուրիշաւագների և գոլիցների համար։ Վարձատրութեան պատրուակաւ հոգեութականների այդպիսի փոխադրութիւնը իսկապէս ամենածանր պատիժ է։ Բայց աւելի սոսկալին այն է, որ չի կարելի բողոքել բարեխնամ իշխանութեան դէմ, որը իւր ուշադրութեամբ զանազանում է և ճանաչում հոգեոր մշակներին։ Երրորդ՝ հոգեութականների թեմական ժողովները մեզանում հրաւիրուում են սովորաբար վճռելու արդէն առաջուց վճռուած խնդիրներ։ Որէնքով այդ ժողովներին պէտք է մասնակցեն տեղական հոգեւորականութեան կողմից ընտրուած պատգամաւորներ, այն ինչ շատ թեմերում այդպիսի ժողովները սովորաբար կազմուած են լինում բարեկարգիչներեց, որոնք Սինօդի 1875 թուի սեպտ,